ՄՈՒԿԱԴԴԱՍԻ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ (ԱՀՍԱՆ ԱԼ-ՏԱԿԱՍԻՄ ՖԻ ՄԱԱՐԻՖԱՏ ԱԼ-ԱԿԱԼԻՄ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] ... ուր որդերը կարմիր (կիրմիզ) ներկ են տալիս – Նկատի ունի որդան կարմիր ներկը:

[2] .... որոնք Մեծ Մասիս և Փոքր Մասիս լեռների տակ են մնացել – Տե՛ս Իբն Հաուկալ, ծնթգր. 67:

[3] Մանազկերտ – Տե՛ս Խաթախրի, ծնթգր. 14:

[4] Այստեղ մի փոքր տարօրինակ է թվում այն քաղաքների գանկը, որոնք Խաթախրին համարում է Առանի (Աղվանք) մեջ: Բանն այն է, որ այստեղ բացի Բուն Աղվանքի, մերձկասպյան շրջանների, ինչպես նաև Արցախ-Ուտիքի քաղաքներից, կան նաև այնպիսիք, որոնք Աղվանք հասկացության մեջ երբևէ չեն մտել, ինչպես օրինակ Տփղիսը, Մանազկերտը, մինչև անգամ Հեռավոր Արխազիան: (Վ. Տ.-Ղ.):

[5] Հանբալիներ են – Մահմեդական կրոնա-իրավագիտական չորս գպրոցներից (մազհար) մեկը: Ահմադ իբն Հանբալ (մահ. 855-ին) կրոնագիտության, իրավունքի և բարոյագիտության գպրոցի հետևորդները: Համարվում է բավականաչափ դոգմատիկ և անդիջում ուղղություն: Թշնամաբար էին տրամադրված այլ ուղղությունների, օրինակ սուֆիզմի նկատմամբ: (Hanabila, H. Laoust, EOI, CD-ROM, (III: 158a)):

[6] Դվինում գերակշռում է Աբու Հանիֆայի մազհարը – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 14:

[7] Շիիներ – Տե՛ս Յակուբի(պ.), ծնթգր. 31:

[8] Սուֆիզմ – Սուֆիզմ, կամ Թասավվուֆ հասկացությունը Իսլամի ներսում գոյություն ունեցած միստիցիզմի անվանումն է: (Tasawwuf, J. O. Hunwick, EOI, CD-ROM, (X: 313a)):

[9] Մալիք գետը – Կամ Նահր ալ-Մալիք (Ամուր) - Գետ Կովկասյան լեռներից հյուսիս, որը թափվում է Կասպից ծովը: